



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«16» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ԳԲԽ-46/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Սպառչինարդ» ՍՊԸ-ի 29.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Սպառչինարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.04.2016թ. ներկայացրած բողոքով «Սպառչինարդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵԲ-

ԲԸԱՇՁԲ-16/66» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Ընկերությունը:

Ընկերության կողմից շահութահարկի հաշվարկում թույլ է տրվել տեխնիկական սխալ, ինչի արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սպառշինարդ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերության կողմից 19.04.2016թ. կատարվել են համապատասխան շտկումներ և վերահաշվարկի արդյունքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է նոր եզրակացություն, որտեղից երևում է, որ «Սպառշինարդ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/66» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սպառշինարդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնել, միաժամանակ կիրառել ժամանակավոր միջոց, այն է՝ կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

Կենտրոնում 04.05.2016թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-46/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ «Սպառշինարդ» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը, խնդիրն առաջացել է այն պատճառով, որ Ընկերության կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկում թույլ է տրվել տեխնիկական սխալ, որը սակայն շտկվել է, արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է նոր եզրակացություն, համաձայն որի Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Երևանի քաղաքապետարանը 04.05.2016թ. թիվ 02/61-8423 գրությամբ «Սպառնշինարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/66» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սպառնշինարդ» ՍՊԸ-ն և ճանաչվել է որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով, 13.04.2016թ. հարցմամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սպառնշինարդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ 28.04.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է նոր եզրակացություն, համաձայն որի «Սպառնշինարդ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցել է պարտավորությունների հաշվեկշռային արժեքը:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 122-րդ կետը, առաջարկել է Ընկերության նկատմամբ նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանը պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 04.05.2016թ. ժամը 17:00-ին նշանակված ԳԲԽ-46/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

ԳԲԽ-46/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-46/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Նոր Նորք վարչական շրջանի 6-րդ զանգվածի Բ. Մուրադյան փողոցի հարակից տարածքի կասկադատիպ համալիրի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/66» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սպառշինարդ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 3.4-րդ հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2016թ. տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 2.1-րդ կետով որոշել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Սպառշինարդ» ՍՊԸ-ին:

4. Պատվիրատուն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 13.04.2016թ. կատարած հարցմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից 2016թ. ապրիլի 11-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սպառչինարդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 15019273 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 13859693 ՀՀ դրամ: Այսինքն, Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

6. Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2016թ. տրամադրված եզրակացությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության՝ 1-ին կետով որոշում է կայացրել մերժել «Սպառչինարդ» ՍՊԸ-ի հայտը և 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Էրան» ՍՊԸ-ին:

7. Ընկերության կողմից ճշտված հաշվետվություն է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարությանը, ինչի արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է նոր եզրակացություն, համաձայն որի՝ «Սպառչինարդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում **պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 15019273 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 15859693 ՀՀ դրամ:**

8. Երևանի քաղաքապետարանը 04.05.2016թ.՝ թիվ 02/61-8423 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.04.2016թ. Պատվիրատուին տրամադրել է հարցմանն ի պատասխան նոր եզրակացություն, համաձայն որի «Սպառչինարդ» ՍՊԸ-ի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

9. «Սպառչինարդ» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով միջնորդել է նաև կիրառել ժամանակավոր միջոց, այն է՝ կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

10. Գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-46/16 բողոքը քննող հանձնաժողովի, **05.05.2016թ.** բավարարել է «Սպառշինարդ» ՍՊԸ-ի միջնորդությունը՝ պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու վերաբերյալ:

3. ԳԲԽ-46/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Սպառշինարդ» ՍՊԸ-ի 29.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Երևանի քաղաքապետարանի 04.05.2016թ. թիվ 02/61-8423 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար **հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝ հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

Ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.4**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այսպիսով, Ընկերությունն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 3.4-րդ հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, մինչդեռ՝ ՀՀ ՖՆ կողմից տրամադրված 18.04.2016թ. եզրակացության համաձայն՝ «Սպառշինարդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում **պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 15019273 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 13859693 ՀՀ դրամ:**

Արդյունքում, Երևանի քաղաքապետարանը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության վերը նշված եզրակացությունը՝ մերժել է Ընկերության հայտը:

Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է նոր եզրակացություն, համաձայն որի «Սպառշինարդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում **պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 15019273 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 15859693 ՀՀ դրամ:**

Այսպիսով, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2016թ. տրամադրված նոր եզրակացության, Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում **պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը** (ակտիվներ՝ 15859693 ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 15019273 ՀՀ դրամ):

Այսինքն, «Սպառշինարդ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» չափանիշը հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքի մասով բավարարում է հրավերի պահանջներին, հետևաբար, Ընկերության հայտը այս հիմքով ենթակա չէ մերժման, ուստի գտնում ենք, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Սպառշինարդ» ՍՊԸ-ի 29.04.2016թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից Նոր Նորք վարչական շրջանի 6-րդ զանգվածի Բ. Մուրադյան փողոցի հարակից տարածքի կասկադատիպ համալիրի վերակառուցման աշխատանքների

ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/66» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով «Սպառչինարդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-46/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան